

ՄԱՍԻՍ

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

507^ր ՏԱՐԻ, ԹԻԻ 31

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

4 ՕԳՈՍՏՈՍ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ	Գ. ՊՈՒՊԼԻ
ՄԻԻՍԸ (Նորավեպ)	Գ. ԶՈՀՐԱՊ
ԿՏԱԿԻ ՄԸ ԱՌԹԻԻ	ՏԴԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
ԳՐԱԽՑԱԿԱՆ «Փիլիսոփային աշակերտ»	Ա. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ
ՏԽՈՒՐ ԽՈՀԵՐ (Բանաստեղծութիւն)	ՎԱՐԴԳԷՍ

ՄԱՍԻՍԻ յաջորդ քիւով պիտի հրատարակենք ԳՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՆԻ մը, ոտանաւոր, Աղետս. Փանոսեանի եւ Յ. Գ. Մամբեանի կողմէ գրուած, — ԵՐԿԶԱՅՆ ՆՈՒԱԳ.

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ԳԱՌՍՈՒՆ ղրԵ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխականառներուն ու Պահչե-Գաբուի ջրավանառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավանառներուն հոյ:

Զեռֆէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍՅԻ

ՀԱՍՏԵ

در علیہ غلطہ «مسیس» غزتیسی اداره

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաթիս, Նորաստիկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Հրատարակուեցաւ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԺԱՏԻՍ. ՏԵՍԵՐԸ, սա նիւթերով. — Չուխայի վաճառականութիւնն ի Պոլիս. — Հաշուակալներուն. — Միջին վճարօր. — Նամականքի Հայ, Թուրք, Քրեան, Անգլ, Գերման, եւ Իսպ. լեզուներով. — Հիւսկէն կերպասներ (Միայլէնտէր). — Առեւտրական Բառարանի շարունակութիւնը (Աղիւս, Աճիօ, Ամասիա երկ.). Գին 1 զրշ:


ՄԱՍԻՆ

50^{րդ} ՏԱՐԻ

— 4 ՕԳՈՍՏՈՍ 1901 —

ԹԻԻ 31

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ



ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆԻ ԿԵԱՆՔԷՆ ՎԵՐՆԱԳՐՈՎ յօդուածը արդէն գրած եւ յանձնած էի Մանկան, երբ Բարիզի Լը Թան լրագրին 5 Յուլիի թիւը ձեռքս անցաւ : Ընթերցողը կը յիշէ որ այդ յօդուածիս մէջ ըսած էի թէ Ստեփան Ոսկանի գործադրելու սկսած դըպրոցական մեթոտը ընտրողական էր եւ միջավայրի ու ժամանակի պէտքերու համաձայն, եւ աւելցուցած էի թէ «Իզմիրի պէս վաճառաշահ քաղաքի մը մէջ աւելի վաճառական, վաճառասան գրագիր ու արհեստաւոր պատարաստելու է» կ'ըսէր :

Բարոյական դաստիարակութեան գաղափարով գրած էի թէ Ստեփան Ոսկան այդ մասը աւելի ընտանեկան կը նկատէր իրաւամբ : Միայն կը հատարար թէ հայ ուսուցիչը, բարոյական դաստիարակութեան մասին եւրոպացի ուսուցիչէն աւելի մեծ դեր պէտք է խաղայ, լրացնելու համար անդաստիարակ ծնողաց թերութիւնները եւ կը պնդէր որ կրօնագիտութեան դասին հետ, որ բարոյական դաստիարակութեան մէջ մասը կը կազմէ, ազաւթ կեանքի ամէն պարագաներու մէջ նշանաւոր պէտք է ունենան պատուոյ զգացումը եւ իր բեւ կէտ նպատակի՝ պարտաւորութիւնը որ օրինապահութիւն կ'ենթադրէ :

Ֆրանսայի արդի ամէնէն նշանաւոր իմաստասէրներէն մէկուն՝ Պ. Ալֆրէտ Գուլլէի (M. Alfred Fouillée) ամիս մը առաջ հրատարակած La réforme de l'enseignement par la

philosophie (Ուսուցման վերանորոգումը իմաստասիրութեամբ) տիտղոսը կրող գիրքին նկատմամբ Լը Թանի յիշեալ թիւին մէջ յօդուած մը կայ որ ամէն տեսակէտով շահաւէտ է :

Յօդուածագիրը այդ գրքին վրայ խօսելով կ'ըսէ թէ գրագէտներու եւ գիտուններու զանազան ներշնչմանց ներքեւ՝ քանիցս փորձեցին Ֆրանսայի երկրորդական (այսինքն միջին կարգի) ուսուցումը բարեփոխել, բայց միթէ յաջողեցա՞ն : Պ. Գուլլէ կը պատասխանէ թէ այդ բարեփոխումները անյաջող ելք մը ունեցան : Կրթական հիմնօրէնայ համոզումներու եւ ժամանակակից գաղափարներու առջեւ որոնք տակաւին ճշդուած չեն, պէտք ունէ՞ին թէ ոչ միաբերու եւ սիրտեւրու միութիւնը ազահովելու կարող բարոյական եւ ընկերային սկզբունքներու : Եւ այս սկզբունքները միթէ ներկի՞ էր ապասել թէ՛ գիտնականներէ թէ՛ գրագէտներէ, պատմագէտներէ եւ բանախօսներէ որոնք ջանացին այդ փոփոխութիւնները յառաջ մղելու :

Գիտունները մասնագէտներ են սաէպ, որոնք իրենց մասնաւոր գիտութենէն անդին լսան մը չէին կրնար տեսնել : — Երկրարան մը, բուսարան մը երբ չտեսնէ որ դպրոցական բրօքրամներու մէջ երկրարանութեան կամ բուսաբանութեան մեծ տեղ մը տրուած է՝ ամէն բան կ'ըսուած կը նկատէ : Ահա՛ այս պատճառաւ է որ Սէն Սիր եւ Բազար-

ուեստեան դպրոցներուն մէջ իսկ երբ քըն-նութիւնները տեղի կ'ունենան՝ աշակերտներէն կը պահանջեն խել մը կեղծ հմտութիւններ որոնք յիշողութեան համար աւելորդ բեռ են եւ կը մնասեն աւելի աշակերտին դատողութեան եւ խորհրդածութեան :

Գրագիտութիւնն ալ այդ տեսակ գիտութիւններէ աւելի չյաջողեցաւ : Հին ճարտասանութեան յաղթութենէն վերջը տեսանք նոր գրական պատմութիւնը եւ ընդհանուր պատմութիւնը խեղդուած՝ գրախօսութեան եւ գիտական քերականութեան մէջ :

Պ. Ալֆրէտ Ֆուլիէ այդ հարեւանցի գիտութիւնները խտուրթեամբ կը դատապարտէ, մանաւանդ դպրոցներու մէջ գրական քննադատութեան (critique littéraire) դրութեան անօգտակարութեանը եւ պատմութեան, այն կերպով որ կ'ուսուցանեն, ստութիւնը, անութիւնը, նոյն իսկ անբարոյութիւնը :

Պ. Ալֆրէտ Ֆուլիէի կարծիքը այն է որ գիտնականները եւ գրագէտները իրենց կոչման չհամապատասխանեցին, վասն զի ճշմարտապէս հոգեբան եւ բարոյագէտ չեն : Ասանց քով կը պահէր նաեւ իմաստասիրական միտքը զոր դատաւարակները անհրաժեշտ պարտաւոր են ունենալու :

Պ. Ալֆրէտ Ֆուլիէ իր գրքին երկրորդ մասին մէջ կը պնդէ թէ մատուցական, գեղասիրական եւ բարոյական դատաւարակութիւնը բարձրագոյն ուսմանց յատուկ առարկան պէտք է ըլլայ : Այդ ուսմանց քով կազմակերպելու է նաեւ գիտական ուսմանց, — գործնական ըլլալու պայմանաւ — մէթոտ մը, որ գիտական եւ բարձրագոյն ըլլալու չհակի, այլ աւելի արհեստական, վաճառականական, երկրագործական եւ գաղթականական (colonial) ըլլայ :

Պ. Ալֆրէտ Ֆուլիէ իր գրքին վերջին մասին մէջ ցոյց կուտայ թէ ուսման ուղղութիւնը բարոյական եւ ընկերային գիտութեանց պատկանելու է, որոնք մեր նոր ընկերութեանց մէջ բարձրագոյն դեր մը խաղալու կոչումը ունին :

«Անտարակոյս, կ'ըսէ Պ. Ֆուլիէ, չենք կրնար պահանջել որ ամէն դատաւարակները իմաստասէր ըլլան, բայց ամէնն ալ իմաստա-

սիրական միտք ունենալ պէտք են, ամէնն ալ դատաւարակութեան մէջ գործադրուելիք հոգեբանութեան մասնաւոր եւ ընկերային բարոյականի յատուկ, մէկ խօսքով սկզբնական իմաստասիրութեան վերաբերեալ լուրջ հմտութեանց տեղեակ ըլլալու են : Ուրեմն եթէ ուսուցման արդի շխիթ վիճակին վերջ տալ կ'ուզուի, դատաստներու հայթայթելու է իմաստասիրական դատաւարակութեան ստուար պաշար մը :»

Այս տեսութենէն վերջը իրաւամբ կրնայ հարցուիլ թէ ի՞նչ տարբերութիւն կայ Ստեփան Ոսկանի 1865ին Իզմիրի մէջ յայտնած եւ գործադրած կրթական գաղափարներուն եւ երեսունըվեց տարի վերջը Պ. Ալֆրէտ Ֆուլիէի Բարիզի մէջ յայտնած գաղափարներուն միջեւ, նկատողութեան առնելով նաեւ միջոցի եւ միջավայրի տարբերութիւնը :

Այն ընտրողական դրութիւնը զոր Պ. Ալֆրէտ Ֆուլիէ օգտակար կը նկատէ երկրորդական վարժարաններու՝ Ստեփան Ոսկան օգտակար կը նկատէր մեր ազգային վարժարաններուն համար : Միայն, Պ. Ալֆրէտ Ֆուլիէ քիչ մը աւելի կը պնդէ իմաստասիրութեան վրայ, բայց կը բաժնայ որ ուսուցումը աւելի արուեստական, վաճառականական եւ երկրագործական ըլլայ :

Ֆրանսացի հեղինակէն երեսունըվեց տարի առաջ Ստեփան Ոսկան կը յղանար եւ կը գործադրէր դպրոցական քոսկրաւ մը որ յատկացած էր Իզմիրի մէջ վաճառական, վաճառասան գրագիր եւ արուեստաւոր պատրաստելու, բայց դժբաղդաբար Ստեփան Ոսկան իր տաղանդովը, բարձր ուսմունքովը, իմաստասիրութեամբը, աշխատութեամբը հանդերձ՝ նաւարկութեան կը հանդիպի եւ գուցէ պիտի մոռցորի մեր ներկայ եւ ապագայ սերունդէն, մինչդեռ Պ. Ալֆրէտ Ֆուլիէ Եւրոպացի իմաստասէրներու առաջին կարգը կը բարձրանայ գուցէ Ստեփան Ոսկանի հաւասար արժանիքով եւ շատ հաւանական է որ, ուսուցման տեսակէտով, իր նոր գիրքը բովանդակ ուսուցչական աշխարհին ուղադրութիւնը գրաւելէ զատ՝ յաջողի անշուշտ իր պաշտպանած ուսուցման եղանակը Ֆրանսայի եւ գաղթականութեանց ա-

մէջ դպրոցներու մէջ ընդունել տալու :

Այս է բաղդին տխուր մէկ հեգնութիւնն ալ, ինչպէս կ'ըսէ Ֆրանսացին :

* * *

Երբ դպրոցներու մէջ ուսուցման խնդիրը, այսինքն բարոյական եւ մտաւորական զարգացման խնդիրը Եւրոպայի զարգացեալ երկիրներու մէջ անգամ՝ մեծով պզտիկով զիտուններու, իմաստասէրներու, մարդասէրներու անընդհատ ուսումնասիրութեան առարկան եղած է, կը հարցնեմ թէ մեր մէջ ինչո՞ւ ըստ բաւականի չուսումնասիրուիր, երբ մեր տահմին մտաւորական մակարդակը գուցէ երկու դարի կարօտ է աշխարհի ըստաւորեալ կեդրոններու մակարդակին մօտենալու համար :

Ուսուցման եղանակը այնչափ կենսական է մանկուոյն ապագային տեսակէտով՝ որ մարդս ասոր վրայ որչափ ճառէ՝ այնչափ տեղը կայ :

Կր խոտովանիմ որ այս խնդիրը բաւական ուսումնասիրած չեմ, առիթներու եւ միջոցներու պակասութեան պատճառաւ, բայց չեմ կարող ինքզինքս արդիւնքանի մը խօսք, քանի մը ճշմարտութիւններ ըսելէ՝ մեր դպրոցներու եւ մեր ուսուցման եղանակին ներկային եւ ապագային վրայ :

Մեր հոգին՝ Աստուծոյ, իսկ ճշմարտութիւնը մեր ժամանակակիցներու, աւելի ճիշտը ըսելու համար՝ մեր սերունդին կը պարտաւորինք :

Երբ Սողոմոն Իմաստուն Իմաստութեան Տաճարը կը կանգնէր, տեսաւ միջին մը որ իր բերնով աւագի հիւլէական հատ մը կը տանէր դէպ ի հոն ուր բանեղոյները կաւը կը կը պատրաստէին : Պատմութիւնը կ'ըսէ թէ ներկայ գտնուողները խնդացեր են միջինին վրայ, այլ Սողոմոն Իմաստուն գնահատեր է այդ միջինին Զանքը եւ պաշտպաներ է զայն ըսելով թէ միջինն ալ իր կարողութեան համեմատ՝ տաճարին շինութեան կը ծառայէր :

Ուսուցման խնդրին գալով, խօսքը կը պատկանի անտարակոյս յարգի Տ. Ռեթէոս Պէրպէրեանի եւ Թովմաս Թէրզեանի նման վաստակաւոր մասնագէտներու, որոնք մեր մանկուոյն կրթութեան նուիրական գործը

տարիներէ ի վեր ուսումնասիրած եւ յաջողած են մեծ ծառայութիւններ մատուցանելու, այս մասին ազգին երախտագիտութեան արժանալով եւ անմահ ձգելով իրենց անունը հայ մանկուոյն դաստիարակութեան եւ ուսուցման պատմութեան մէջ :

Ուրեմն ճշմարիտը ըսելով, մեր մէջ, ի բաց առեալ Պէրպէրեան Վարժարանին նման հանրօգուտ կրթական հաստատութիւններ, մեր դպրոցները շատ ետ մնացած են զմեզ չըջապատող օտար դպրոցներէ եւ մեր ուսուցման եղանակը շատ թերի է անոնց ուսուցման եղանակէն : Օտար դպրոցներու արտադրութիւնները անբաղդատելի կերպով առատ եւ լաւագոյն են մերիններէ : Այս ալ ակներեւ կը յայտնուի նոյն իսկ արդի գործունէութեան ասպարէզին մէջ գտնուող մեր սերունդին հետ բաղդատութենէն : Արդարեւ նկատողութեան առնենք եւ բաղդատենք մեր վաճառականը, զրազիրը, արուեստաւորը, երկրագործը, օտար վաճառականին, զրազիրին, արուեստաւորին եւ երկրագործին հետ եւ պիտի տեսնենք որ առնուաղն քաւորդ դարու մը համար ետ մնացած են անոնցմէ եւ եթէ դպրոցական իրաց վիճակը այսպէս շարունակէ՝ յետագիւղութիւնը օր ըստ օրէ աւելի զգալի պիտի ըլլայ : Մեր մէջ բացառութիւններ կան հարկաւ, բայց բացառութիւնը ընդհանուր կանոնը կը վաւերացնէ :

Արդէն ժամանակին հետ չքալելը յետագիւղէտով փրկութեան ուրիշ ճամբայ չկայ բայց միայն մեր մանկուոյն բարոյական, մտաւորական եւ նիւթական վիճակը բարւոքել, այսինքն անոնց լաւագոյն դաստիարակութիւն եւ ուսումնք տալ ժամանակին եւ միջավայրին համաձայն :

Չմոռնանք որ այս է մեր անհրաժեշտ պարտքը դէպի մանկտին զոր հատուցանելու պարտաւոր ենք եւ թէ համեմատաբար մեր նախորդները իրենց ազիտութեամբը հանդերձ՝ մեզմէ աւելի յաջողած են այս պարտքը ըստ կարելոյն հատուցանելու :

Ինչպէս նոյն իսկ Ֆրանսայի մէջ, ուսուցման արդի եղանակին վրայ խօսելու առթիւ, գիտունները կը համաձայնին ըսելու թէ այս

սօր աշխարհի կերպարանը փոխուած է եւ թէ գործնական գիտութիւնները մասնաւոր-
ներու եւ ժողովուրդներու գոյութեան պայ-
մաններն իսկ գրեթէ հիմնովին փոխած են :
Այսօր արուեստները եւ վաճառականութիւնը
կեանքի պայմանները տարբեր կերպով կա-
նոնաւորած են : Ուրեմն «Այսօրուան օրս», —
ինչպէս ըսած է Պ. Ժիւլ Լըմէթր 5 Յունիս
1895 թուականին Սորպոն արտասանած սքան
չելի ճառին մէջ, — սիրտ եւ գործունէու-
թիւն ունեցող ազալ մը, մարմնով առողջ եւ
ճարպիկ, վաճառականական լաւ ուսումնե-
րով անած, գործնական գաղափարներու
տէր, ունենալով նաեւ արուեստ մը եւ որ
ասոնցմէ զատ լաւ կարգացած է, իր հա-
ճոյքին համար, Փրանսացի նշանաւոր դասա-
կան հեղինակներէ մէկ քանին, աւելի չահե-
կան, աւելի առողջ, աւելի բարոյական տը-
ժէքի տէր եւ աւելի աշխուական է քան թէ
մեր դպրականը եւ սին գրագէտներու մեծ
մասը » :

Այս է ուրեմն Պ. Ժիւլ Լըմէթրի եւ իր
նմաններու տեսլականը (idéal) նոր ուսուց-
ման մասին :

Գանք սակայն մեր տեսլականին : Անոնք
որ բնական գիտութեամբ կամ բնագիտական
գննութեամբ կը զբաղին կամ գէթ զիտեղ գի-
տեն, տեսած եւ համոզուած են անշուշտ թէ
իրեքսոգնութեան գլխաւոր արտայայտութիւնը
մարդուս գէպի մանուկը բնագոյնամբ տուած
օգնութեան մէջն է : Նախ մայրն է որ իր
զաւակը կը սիրէ, կը դգուէ, կը խնամէ, իր
կարողութեան համեմատ կը դաստիարակէ եւ
երբեմն ալ անոր համար կը զոհուի : Յետոյ
հայրն է որ զայն կը խնամէ, անոր ապագան
կը խորհի, կրթելու կը փնայ եւ տեսնելով
իր անկարողութիւնը այդ պաշտօնը կատարե-
լու, դաստիարակին, դասատուին կը յանձնէ
զայն, անդադար հսկելով անոր մտաւորական
եւ բարոյական կեանքին ու զարգացման
վրայ, բերկրելով տղուն մէն մի յառաջդիմու-
կան քայլէն : Եւ այդ տղան պիտի զարգա-
նայ, պիտի մեծնայ եւ օր մը ընկերութեան
անդամ մը պիտի ըլլայ, հետը բերելով իր
առած ուսմանց պաշարը, որ պիտի ծառայէ
կեանքի պայքարը արժանաւորապէս մղելու :

Ուրեմն հաւաքապէս ըմբռնելով, աղուն
քիչ կամ շատ ընդունակութենէն եւ առած
ուսմունքէն կախում պիտի ունենան տղուն
ընտանիքին, ինչպէս նաեւ ընկերութեան ու-
պագան, որուն անդամը ըլլալու կոչուած է :

ԳԷՈՐԳ ՊՈՒՊԼԻ

Մ Ի Ի Ս Ը

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Էմման հայ հռոմէական կին մըն էր Եւ-
րօպացիի մը հետ ամուսնացած . գեղեցիկ,
չեմ գիտեր շիտակը . ո՛չ, գեղեցիկ չէր ան,
գէթ արուեստագէտներուն սահմանած գե-
ղեցկութեամբը :

Թուի գէմքով սեւաջուի մը, հոյաչէն
կառուցում մը որուն լանջքին ու բարձրուն
գեղծանող շապլուղ կարկանդակը պակասու-
թիւն մը պիտի ձեւացնէին թէոր հասակին
բարձրութիւնը չըլլար :

Հոն՝ ուր իր մասնաւոր պջրանքը կը դնէր
այս կինը, իր ոտքերն էին . միշտ նոր պօթե-
րու մէջ ամփոփուած ոտքեր որոնց նրաւ
ւարտ մատներուն ծայրերէն մինչեւ սրունքին
դնդղուց միսը բարձրացող ու գրկող նաւր
կաշին երեւան կը հանէր ան, անպատ-
կառ հրճուանքով մը, փողոցի փոշիէն կամ
ցիւխէն չաղտոտելու համար, պէտք եղածէն
աւելի վեր՝ շատ աւելի վեր՝ հանգրիճելով իր
չըջագգետը :

Այս ոտքերը բանաստեղծներուն երգած
փաքրիկ ու մանկական խաղալիկները չէին .
այլ իր մարմնեղ ու հասուն կնոջ — ըսի՝
միթէ որ երեսունը անցուկ էր անիկա — հա-
մեմատութիւններուն կը պատշաճէին, իրենց
գիծերուն զմայլելի ներդաշնակութեանը մէջ
միայն յայտնելով իրենց ուրոյնութիւնը :

Էմման գէմքը վերլուծող մը, այն յու-
տուկ գիտութեան կանոններուն համեմատ ու-
րոյնմով կ'ըսեն թէ մարդկային հոգեոյն մին-
չեւ խորը կը թափանցեն, վախէն պիտի կենտրո-
այնքան պակուցիչ ու ահաւոր բան մը պիտի
գտնէր այս անմեղ ու մանկունակ երեսին
վրայ :

Աղբիկ տաներ Օրթապղիղի մէջ շատ տե-
սած էի պինքը . հիմայ, շատ մը տարիներ
անցնելէն վերջը, երբեմն Բերայի շիտակ
ճամբուն վրայ կը հանդպէի իրեն . ամառները
Թարապիս կամ Բրինքիթօի մէջ ուր կուգար

միշտ էրկանը հետ , կը տեսնուէր եւ աներեւոյթ կ'ըլլար իսկոյն :

Էմմա անոնցմէ չէր որ ամիսներով տեղ մը կը կենան , այնպէս որ զինքը տեսնելու ստուգութիւնը ունենաս : Այլ այն վաղակորոյս եւ ճիշտ ագոր համար մնտուռած հետաքրքրող ու երբեք չի գոհացնող կնոջական տեսիլքներէն մէկն էր որոնց էրիկ մարդիկ անձկաբեկ կը սպասեն : Հորիզոնին վրայ անակնկալ կերպով ծագող ու անհետացող լոյսերէն մին՝ որոնց շաւիղը Լը Վէոիէ մը , աշխարհիս բոլոր անհունական հաշիւները մէկտեղ բերելով , չէ կրցած դեռ ճշդել :

Ես որ գիմագուշակ հարցուկի հովեր կ'առնեմ երբեմն , ամէն հեղ իրեն հանգստեւ կը ջանայի , ինքնիրենս , իր գոյութեան առեղծուածը , իր աղիտարեր արարածի կեանքին ալքերը պրօտել : Ձինքը տեղ մը հանգստեւ , հետը տեսնուելու համար հնարք մը չտեսնած դեռ , կը ձգէր կ'երթար ան , կարծես շատ իսկ սեղեւով , իր վրայ հիացողներուն համար , իր տեսքին քանի մը ժամուան վայելքը :

Բ

Էմման ամուսնացած էր , շատ երիտասարդ ամուսնացած , քանի որ իր զաւկըններուն էն մեծը , տասներեք տարեկան կար հիմայ , թխագէ՛մ տղայ մը ճիշտ մօրը աչքերով :

Իր ամուսնութեան պատմութիւնը հետաքրքրական ու մասնաւոր բան մը չունէր : Աղուորութեանը համար միայն առեր էր զինքը էրիկը , նիհար ու հիւանդկախ մարդ մը , ժանգոտած պղնձի դէմքով , որ չի յափրացող ցանկութեան մը վայելքը մնտուած էր միայն այս ամուսնութեան մէջ : Էմմա , իրր ճշմարիտ հայ-հոմէական աղջիկ մը , Եւրոպացիի մը հետ ամուսնանալովը իր եւ իր ընտանիքին բաղձանքներուն կատարը հասած էր :

Ճշմարիտ սէրով մը կապուած էր էրկանը հետ տարիներով ու անձնութիւնութեամբ խնամելով զայն Գիթութեան քրոջ մը պէս , առանց տրտնջալու եւ ուղիղ բանի քիչ մը անհամաձայն թուող այս հաւատարմութեան յարուցած ընդհանուր զարմանքին վրայ զուարճանալով :

Շատոնց ըսեր էին բժիշկները որ էրիկը երկար չապրիր , մինչդեռ մարդը հաճոյք կը դար ի դերեւ հանելով այս գուշակութիւնները ու իր հէք ոսկորներուն կմախաձեւ չէնքը , իր կանչըցած երեսը պտոցներով կնոջը պարարտ հրապոյրներուն քովը :

Ո՛չ վէճ եւ ոչ կռիւ իրենց մէջը , ինչ որ քիչ զարմանք պատճառած չէր իրենց բարեկամներուն որոնք , ամէն բարեկամներու պէս , գայթակղութիւններու ակնկալութեամբը կ'ապրին : Անակնկալ համերաշխութիւնը այս ամուլին՝ զրկանքի պէս բան մը կ'ըլլար անոնց որ ամուսնութեան յաջորդ օրուան համար գժտուի , երկպառակութիւն նախատեսներ էին : Եւ անոնք որ ջանացեր էին իր հոմանիները ըլլալու , հիմա մէկիկ մէկիկ քաշուեր էին , չի ծածկելով իրենց զայրոյթը :

Մէկը միայն յամուեր ու գամուեր էր անոր հրապոյրներուն :

Օրթագիւղի իմ դպրոցական ընկերներէս էր , ան ալ հեռուանց ծանօթ մը Էմմային , հիմայ երեսունի մօտ , բայց դիրաւհաւատ ու միամիտ սրտով տղայ մը , որուն հոգւոյն ազնիւ մետաղը իր նոր թափծուի փայլին մէջն էր տակաւին եւ զոր ծախորդութեանց շունչը չէր եկած նսեմացնել :

Մաքուր հագուած , առանց սեթեւեթի սակայն , միշտ կարգալու գիրք մը բռնած ձեռքը , ընթերցումը ըլլալով իր մեծագոյն գրադուռնք , ճերմակ թաշկինակով՝ իր կարճատեսի ակնոցը մաքրելու գրադած շարունակ :

Ամէն աղմուկէ , չափազանցութենէ հեռացող իր կեանքը՝ իրաւամբ մեզ ամէնուս օրինակ ցուցուցած էին ամէն ատեն : Երկրաշափական ձեւերու ճշտութեամբը կազմուած էր իր գոյութիւնը : Հօրը մօրը մէկ հատիկը , աչքերուն լոյսն ու պարծանքն էր . զինքը ամուսնացնելու կարօտէն զատ իր ծընողքը մամուռք չունէին : Նշանաւորութեան պզտիկ խօսքեր զուրցուելու վրայ էին իրենց գրացիներէն մէկուն աղջկան համար որուն տունը շատ կ'երթար ինքը :

Պանքային մէջ , ուր ընցուն ամսականով պաշտօն մը ունէր , իր մեծերը կը սիրէին անոր հաւատարիմ ու աշխատասէր բնաւորութիւնը . մեծ ապագայ մը վերապահուած էր իրեն , գրեթէ խօստացուած :

Դպրոցէն դուրս՝ միշտ բարեկամ, մանաւանդ թէ մտերիմ մնացեր էինք՝ ինչ որ չափ չի պատահիր։ Կ'ըլլար սակայն որ ամիսներով, երբեմն տարի մը զիրար չի տեսնէինք, բայց առջի հեղ զիրար գտնեւնուս, փոխադարձ քաղուածքը կ'ընէինք իրարմէ հեռու անցուցած օրերնուս, մեր ուրախութիւններուն եւ մանաւանդ մեր յուսախաբութիւններուն, առանց անտեղի հպարտութեամբ մը իրարմէ բան պահելու։ Եւ այս խոստովանութիւններով մեր ընդհատուած մտերմութիւնը ա՛յլ աւելի կ'ամրանար։ Չէր հաւնէր ան իմ ապրելու եղանակիս ու խրատելու կ'ելլէր զիս։

— Երջանկութիւնը՝ երջանկութիւն չի փրկուելուն մէջն է, կ'ըսէր ինծի, երբեմն։

Եւ իր անդորր կեանքը նետելով երեսօս իր ըսածը կը հաստատէր։

Գ

Ինծի համար, բոլոր զինքը ճանչցողներուն համար ամէնէն ապշեցուցիչ անակնկալը եղաւ Էմմային համար ունեցած իր տարփանքին գայթակղութիւնը։ Գիտէի քիչ մը այս կնոջ համար ունեցած իր համակրութիւնը, բայց այս վերջաւորութիւնը մտքէս չէի անցըներ բնաւ։

Ուսկից ո՛ւր այս անփորձ ու միամիտ երիտասարդը կրցեր էր Էմմային պէս կնկան մը սիրտը գրաւել։ Ի՞նչպէս մանուսանդ, ինքը՝ հանրային կարծիքին այնքան ուշադիր մը, պայմանադրական բարոյականէն մազի չափ չի չեղող մը, ոտքի հարուածով մը մէկդի ըրեր էր իր ծնած օրէն զինքը մեծցնող չորս դիէն պաշարող կեանքի կարգն ու սարքը, ընտանեկան աւանդութիւնները, ատենց բոլորին վրայ ելեր նստեր էր, ամուսնացած ու զաւկի տէր կին մը առեւանգելու ու անոր հետ ապրելու չափ յառաջ երթալու համար։

Երբոր այս լուրը առի, վեղարը ու սքեմը նետող վանականի մը նմանցուցի զինքը, այնքան աւելի յոխորտ իր ըմբոստութեանը մէջ՝ որքան խտտկրօն եղած էր իր հաւատքի ժամերուն։

Բնութիւններ կան որոնք ջուրին թոյլ ու մեղկ հնազանդութեան երեւոյթը կ'ընծայեն։

Բայց ջուրին կաթիլներուն միօրինակ ու անփոփոխ աշխատութիւնը լռեւեայն կը կատարեն անոնք, մեղմիւ հեշտօրէն մաշեցնելով զիրենք չըջապատող քարերը ու ժայռերը եւ ծակ մը անցք մը բացուելուն՝ հեղեղի մը պէս դուրս կը թափուին։

Այս երիտասարդինը այդ կարգէն էր ահա. ինքնիրենն այս խորհրդածութիւնները ըրի միայն։ Այս առեւանգութիւնը սակայն ընդհանուր խօսակցութեան նիւթ եղաւ. կիները իրենց մաղձոտ չարախօսութիւնները դուրս թափեցին. այս կնոջ՝ էրկանը դէմ ցուցուցած անհաւատարմութիւնը քարկոծեցին. զինքը ձեռքէ ձեռք յափշտակել ուզող էրիկ մարդոց ճաշակին վրայ ալ շատ մը խոնդացին. գոնէ գեղեցիկ կին մը ըլլար անիկայ. սեւ ու նուաղուն աչքեր ունէր ան. ո՞վ սեւ աչք չունի Պոլսոյ մէջ. իր միտի աղուորութիւնը, իր արդուզարդին չքեղութիւնը, ասոնք էին բոլոր հրապոյրները, որոնց առջեւ ահա մարդիկ կանգ կ'առնէին։

Երիտասարդին մասին էրիկ մարդոց դատաւճիռը նուազ խիստ չէր։ Հանրային կարծիքը այն ատեն մանաւանդ կ'որոտայ ու շանթեր կը տեղայ երբոր իր ամէնէն խարխուլ ու կեղծիքով միայն ոտքի վրայ կեցող սկզբունքներէն մէկուն դէմ է մեղանչումը։

Իմ բարեկամս, մէկ օրէն միւսը, ամէնէն անշնորհ ու անառակ երիտասարդի հոշակը ստացաւ. իր անհատական կեանքը քրքուեցաւ ծայրէ ծայր ու լեցուն գտնուեցաւ արատներով։

Պանքային մէջ անգամ իր խղճամիտ պաշտօնեայի դէրքը կորսնցուց. յառաջդիմութեան յայտերը մարեցան եւ մտերմական բարեւները գլխու հարեւանցի չարժեմներու փոխուեցան։

Ես առիթ չունեցայ զինքը տեսնելու բոլոր այն ամառը. իմացայ սակայն որ իր ծնողքէն զատուելէն վերջը Էմմայ հետ միջոց մը Եսպաճըզի կողմերը գացեր էր, յետոյ, տեղի տալով իր սիրած կնոջ յարափոփոխ պահանջումներուն, վերսկսեր էր անոր հետ աստանդական կեանք մը գիւղագնացութեան, ութ օր հոս՝ հինգ օր հոն եւ այսպէս մինչեւ աշունը պատեւէն վերջ Բերա եկեր էին ձմեռը անցընելու։

Դ

Օր մը , բնաւ մաքէս չանցած մէկ վայր-
կեանին , գրասենեակէս ներս մտաւ ան . տի-
րարար , չապասեղով գրագրիս հրամցնելուն .
երկար ճամբու մը յոգնութենէն պարտասած
մէկու մը պէս աթոռի մը մէջ ինկաւ , յետոյ
դեռ ինծի բան 'ը չըսած՝ խահուէ մը ապսպր-
րեց ինքզինքին եւ սիկառէթ մը վառեց .

— Քենէ ուրիշ մէկը չունիմ իմ սիրտս բա-
նալիք , ըսաւ ինծի դողդոջուն ձայնով մը .
այն վայրկեանին ուր ամէն ինչ կ'երերայ ու
փչելու մօտ կ'երեւայ շուրջս , անխախտ՝ քու
բարեկամութիւնդ միայն կը տեսնեմ ու քեզի
կ'ապաւինիմ :

Այս ձայնը զարմացուց զիս , երեսը նայե-
ցայ ալէկ մը , որքա՛ն փոփոխութիւն քանի
մը ամառան մէջ , նիհարցեր ու վատեր էր .
տեսնելի կարմրութիւնը իր այտերը կը շտա-
գունէր :

— Ինծի պատահածները հարկաւ գիտես ,
չարունակեց անիկայ , տտեն չիկայ որ երկար
բարակ պատմեմ . քեզի զոհոնք . էմման էրկը-
նէն զատուեցաւ , այր ու կնոջ մէջ փոխա-
դարձ յօժարութեան գործ մը եղաւ ասիկայ
իրենց ամուսնութեանը պէս . իրենց շահերը
իրաւունքները ամէն ինչ ճշդած , սրտած են .
զուկըները իրենց հօրը քով կը մնան ու մայրը
իրաւունք ունի ուզած օրը զանոնք տեսնելու
առանձին : Դատարան մը ասկէ ալէկ չի պի-
տի վճռէր :

Ուրեմն իմ բաղձանացս լրումին մէջն եմ
հիսւայ . ասո՞ր համար արդեօք աշխարհիս ա-
մէնէն ապերժանիկ մարդն եմ : Ի՞նչ տարօրի-
նակ սէր է իմինս որուն վայելքը գրկանքին
չափ կը տառապեցնէ :

Ահաւասիկ բոլոր խնդիրը .

էմման իմն է , իմաբարոզին , բայց զայն
կորսնցնելու վախն է որ ամէն վայրկեան կը
կը պաշարէ զիս :

Եթէ օր մը ձգէ զիս երթայ , Աստուած
իմ . Այս ահաւորողին մէջ ոչ գիշեր ո՛չ ցորեկ
ունիմ ես . քաջաւօղջ մարդիկ կան որոնք
թոքախտ բլլալու սարսափով իրենց կեանքը
կը դառնացնեն . ես անոնցմէ՞ եմ արդեօք ,
թէ ոչ նախազգացումը , մերձաւոր կորուստին
նախազգացումն է որ զիս կը խուովէ : Ճշմար-

տութեան ասիկայ աւելի մօտ է . երջանկու-
թիւնս այնքան մեծ է , այնքան անհաւատալի
որ վայրկեաններ կան որ անոր ստուգութեան
վրայ կը սկսիմ տարակուսիլ . քնաշրջիկի մը
պէս կ'անցնիմ կեանքին մէջ , երազաչէն աշ-
խարհի մը շրջանը ընելով , ո՛րչափ օրուան
մէջ . . . եւ ե՞րբ պիտի բլլայ զարթումը :

Տեսնելով իմ անհամբերութիւնս այս ան-
կապ ու անյարիր խօսքերուն դէմ .

— Երջանկութենէ երես առած մէկը չեմ ,
աւելցուց բարեկամս , մէկը անոնցմէ որոնք ի-
րենց եզական բաղդաւորութիւնը ուրիշի մը
վկայութեամբը հաստատելու հաճոյքին հա-
մար անոր կը պատմեն զայն յատկապէս խել
մը դժգոհանքի պատճառներու մէջ պարու-
րելով :

Ո՛չ . ես իրական անձկութեան մը մատ-
նուած եմ , վախի մէջ թէ ուրիշ մը էմման
ձեռքէս պիտի յափշտակէ : Ո՞վ է այդ միւ-
սը , մէջտեղ ելած է արդէն , թէ երեւան
պիտի ելլէ . մութ հարցեր ինծի համար .
բայց այդ միւսը կայ . կասկած չունիմ ասոր
նկատմամբ : Գիտե՛ս , երբեմն սենեակիդ մէջ
գիրք մը կարդացած պահուդ կամ պատու-
հանէն փողոցը դիտած մէկ վայրկեանիդ ,
առանց ռոտաձայն մը ըսած բլլալու կը զգաս
խոկոյն որ մէկը ներս մտած է . չես
տեսած դեռ զինքը , բայց ապահով ես ,
ստուգութիւնը ունիս որ զլուսդ վեր առնե-
լուդ գիրքիդ վրայէն , կամ ետիդ դարձե-
լուդ , մարդը պիտի տեսնես եւ իրօք զայն կը
տեսնես ալ . Ես ալ ատոր պէս՝ իմ երջանկու-
թեանս մէջ սոք կոխող ինէ ուրիշի մը գոյու-
թեան ահաւոր ստուգութիւնը ունիմ : Ի՞նչ
կ'ըսես դուն ասոր :

Այս հարցումին վրայ նոր սիկառէթ մը
վառեց անիկա :

Ե

— Դուն նախ պատմէ ինծի , ի՞նչպէս
ձանչցար , ի՞նչպէս ձեռք ձգեցիր այս կինը ,
պատասխանեցի իրեն , միայն մոմոտութեա՛րդ
ըսելու եկար հոս . ի՞նչպէս եւ ինչո՞ւ կը սի-
րես զինքը . ես որ երբեք սիրած չեմ , հե-
տաքրքիր եմ ատոր :

— Սիրեցի զինքը անոր համար գուցէ որ
հազարումէկ պատճառ ունէի չի սիրելու հա-

մար . այո' , հազարումէկ , իմ կեանքս , իմ սկզբունքներս , իմ ընտանեկան վիճակս , առանք բոլորը մէկ կողմէն , այս կնոջ բոլոր կեանքը միւսէն , իրեն մօտենալն անգամ կ'արգիլէին ինծի :

Բրինքիքօի մէջ հանդպեցայ անոր , միեւնոյն պանդուկը գտնուեցանք դիպումսով ու դրացի իրարու : Պզտիկուց գիտէի Էմման , բայց բոլորովին մոռցեր էի զինքը . ո՛րչափ գեղեցկացի էր մեծնալով : Առջի տեսած վայրկեանէս ամէնէն բուռն տպաւորութիւնը ըրաւ վրաս :

Իրիկունը ճաշէն ելլելուս — անիկա էր կանը ու աղոցը հեռ մասնաւոր սեղանի մը վրայ կ'ընէր ճաշը — պարտէզին մէջ մինակը կը պտտէր , վարանոտ քալուածք մը ունէր , ու ձեռքի անգիտակից շարժումով , որ վարժութիւն եղած է ա՛լ իրեն համար , իր սանտրած մագեքուն կարգէն կանոնէն փախչելով ճակտին վրայ խնող պզտիկ գանգուրները կը շտկէր :

Մինակը ծառերուն տակ շրջագայած առտեն անթափանցելի խորհուրդներու մէջ ընկղմած կը թուէր , տրտմութեան քողք մը , այն ամառ գիշերին ստուերներուն պէս , թափանցիկ , ոտքէն գլուխը կը պարուրէր այս աղունոր կինը . ինչո՞ւ համար տխուր էր արդեօք , ինքնիրենս ըրի այս հարցումը . քովէս անցնելուն՝ մեր նայուածքները իրարու հանդպեցան . կարծեմ թէ բացայայտ զմայլանք մը կարգաց իմինիս մէջ , ո եւ է գարմանք կամ ուրախութիւն չի ցուցուց ասոր փոխարէն . միայն հանդարտ ուշադրութեամբ մը եւ առանց քաշուելու ինքն ալ զիս դիտեց . անկէ վերջը ամէն անգամ իրարու պատահելուս այս նայուածքը չի պակսեցուց վրայէս , անթարթ կերպով սեւեռած ու տրտում նայուածք մը , մինչեւ սրտիս խորը իջնալու ակներեւ մոռադրութեամբ :

Ես՝ ներսէս այս անտեղի սիրուն հետեւանքները կը հաշուէի ու իմ բոլոր արիւթեանս կոչում կ'ընէի ազատելու համար անոր հմայքէն . անիկա կարծես զգալով խուլ պայքարը որ կը մղուէր հոգւոյս մէջ , ա՛լ աւելի լուռ պչրանքով կը սեւեռէր իր նայուածքը վրաս , մարելու մօտ կանթեղի մը մէջ իւղ թափելու պէս :

Այս եղաւ մեր սիրուն սկիզբը : Էրիկը սակայն հիւսնդ էր միշտ . կանոնաւոր կերպով շարժուման մէջ օր մը կամ երկուք իր սենեակը մնալու ստիպուած էր ցախն սաստկացած միջոցին եւ իր կինը քովը կը հսկէր , թողլով իր գաւառները սպասաւորի մը հրահրութեան :

Չէի սիրեր այդ մարդը :

Աննկարագիր , անպատկառ ու ամէն բան հեգնող մարդոց մէկն էր , որոնց առջեւ ամէն ընկալեալ կանոններ միաւտու թիւններ կը համարուին :

Լուսնի գիշեր մը սրտուեցաւ որ պանդուկին բոլոր հիւրերը կղզիին շրջանը ընենք : Ուսանք կառքով՝ սմանք էջ հեծած ճամբայ ելան :

Բրինքիքօն զինքը շրջապատող կապոյտ ծովին վրայ կը ցուցնէր իր սաղարթախիտ բլուրները , իր վիլլաներուն գոյնզգոյն երեսները , իր պարտէզներուն երփնագեղ կանաչուած թիւնները : Ու անհուն հայելին մէջ որ այս աննման կապոյտէն կը ձեւանար , այս բոլորը կը դողար , կը սարսուէր ալեակի մը վեհերոտ տատանումին հետ :

Այնչէն ու ձախէն բարձրացող երգերու ժխորովը Տիասքէլօ հասանք : Հոս լուսինը իր բոլոր պայծառութեամբը կ'ողողէր պզտիկ սարահարթը . Բէնտիքի եզէրքէն՝ ուրկէ կը բարձրանար , աննշմարելի վերելքով մը , ագամանդի կոտորուքներովը յարդարուած լուսեղէն պողոտայ մը ծովուն վրայ կ'երկննար , կը փափլէր , կը լայննար , կը նեղնար շարունակ :

Բազմութեան մէջ տեսայ Էմման որ վար իջած կառքէն , Նրիսթօս տանող մեծ ճամբուն կողմը կ'երթար մինակը : այս Ժամուն բոլորովին ամայի էր այդտեղը , նոճիներուն չուքովը պատսպարուած :

Գիտես որ ձեռներէց մէկը չեմ ես , բայց ութ օրէ ի վեր այս կինը այնքան լուռ պչրանքով պաշարեր էր հոգիս , որ իրեն հետ խօսելու փափագին դիմադրելու անկարող էի ա՛լ :

Հոտ , այդ ճամբուն վրայ , զոր կարծես ինքն ալ յարմարագոյն վայրը դատեր էր , խօսեցայ հետը առջի անգամ :

Սեւ մետաքսէ ֆոռաւթ մը ունէր, այսօր-
ուան պէս միտքս է, եւ վեր ժողոված ճերմակ
պատմութեանին ժիւրքէն տանթէններու եռեւե-
փը ու փրփուրը դուրս կը ժայթքէր: Ինքը
կ'ուկնդրէր ինծի՝ շարունակելով ժողովաւորը
իր ճակտին անհնազանդ մագերուն, մատը
բերին զնելով երբեմն խոհեմութիւն պատ-
ուիրելու գիրքով, բայց որոշ ու մեկին պա-
տասխան մը չի տալով երբեք:

Այսպէս իր վրդովիչ կնկան դերին մէջ էր
զոր Սիէնքիէվիչ, իրաւամբ, Բիզույի աշտա-
րակին կը նմանցնէ, ծռելով միշտ՝ բայց չկ-
նալով բնաւ:

Իր ձեռքը զոր համբայրներով ծածկեր էի,
քաշեց յանկարծ ուժով. մեր կողմը եկող ոտ-
նաձայն մը լսեցի էր. վայրկեան մը սպասելէ
ետքը մեր վախը ի դերեւ ելաւ. վարէն՝ մի-
այն երգի եղանակներ կը հասնէին մեզի:

Հոս անտառին մէջ, գիշերը իր վճիտ ան-
դորրութեանը մէջ շքեղ էր, բիւրեղի մը ջինջ
պայծառութիւնը հագցնելով ամէն առարկա-
ներուն:

Ծառերու երկար շարքը իրենց պոչերուն
վրայ յանկարծ կանգնած անհամար օձերու
բանակ մը կը պատկերացնէր, խայտարակէտ
շապիկներով վիշապներ, մեր սէրը մեր եր-
ջանկութիւնը դիտող նախանձոտ աչքերու
պէս, պաշարելով զմեզ չորս դիէն: Գետինը
ծածկող տերեւներուն խշրտաւքէն զատ ոչինչ
կը խռովէր մեր կարճատեւ առանձնութիւնը:

Էմիւս ինքը սթափեցուց զիս ըսելով.

— Դառնա՛նք:

Յաջորդ, վաղույաջորդ ու միւս օրերը էմ-
իւս իր էրկանը հետ ա՛լ աւելի սիրով, ա՛լ
աւելի մտերիմ՝ եւ ինծի դէմ աւելի անտարբեր
ու սառն գտնուեցաւ:

Հնարք մըն էր՝ առ էրկանը կասկածները
չարթնցնելու համար:

Ձ

Գիտե՞ս թէ ինչ ծանր գոհալուծիւններու
պարտաւորեց զիս այս սէրը: Եթէ ոչ պատ-
ւայ, գէթ խղճմտանքի դէմ շատ մը մեղան-
ջումներու առաջնորդեց զիս. ոչ ոք ինչ ա-
ւելի խտուածամբ կը դատէ իմ արարքս.
ծնողքս՝ որոնց բոլոր համոզումները, ակնկա-

լութիւնները, շոյած երազները ոտնակոխ
կ'ընէի. այն սիրուն աղջիկը որուն սիրտը
վատտիկեր էի այնքան անարժանութեամբ եւ
որ քիչ մնաց նշանածս պիտի ըլլար, ասոնց
լուռ կշտամբանքը կը զգայի սրտիս մէջ. ա-
մուսնացած, զաւերներու տէր կիներ մը հրա-
պուրելու ձեռնարկը ոչ նուազ անարգ ու ան-
արժան գործ մը կ'երեւար ինծի ու այս ա-
մէնը կոխելով անցնելով, ա՛լ աւելի ուժով
կապուած կը զգայի ինքզինքս էմիւսին հետ,
իմ բոլոր յանցանքիս մեծութեամբը կապ-
ուած:

Էմիւս ինքը զիս ընդունեց էր նախ անոր
համար որ իմ ցուցուցած անահաճան սիրուս
պէս սէր մը տեսած չունէր. յետոյ, գեղեցիկ
կին մը միշտ պէտք ունի որ մէկը իր գեղեց-
կութիւնը իր երեսին ըսէ. հոմանին տեսակ մը
խօսուն՝ հայելի է, կանոնց արդուգարդի
սպասին մասը կազմող: Շատ վերջը միայն,
կարծեմ, ինքն ալ փոխադարձ համակրու-
թիւն մը զգաց ինծի համար: Այդ միջոցին
էր որ յանկարծ ինքնաբերաբար, շատոնց
որոշուած վճռուած բանի մը պէս յայտնեց
ինծի թէ պատրաստ է զատուելու իր էրկնէն՝
ինծի հետ ապրելու համար: Էմիւսին այս ա-
րիւթիւնը բոլորովին զիս կապեց իրեն. ահա
թէ ինչու ես ալ իմ ծեր հայրս ու մայրս թո-
ղուցի:

Անկեղծութիւնը կը մեծարեմ նոյն իսկ եր-
բոր յանցանքի մը մէջ ի հանդէս կուգայ:
Չեմ սիրեր մանուած ապատ ձեւերը որոնց տակ
Մեղքը կը պահուրտի ու կը շարունակէ Առա-
քինութեան յատուկ մրցանակները քաղել:
Ըսողներ կան որ բարոյականի՝ կեղծիքն ալ
բարոյական մըն է. ես այս բանաձեւը գար-
շելի կը համարիմ: Բոլոր խնդիրը իր ըրածին
պատասխանատուութիւնը ընդունելու եւ չըն-
դունելու վրան է: Մին՝ թողով ամուսնա-
կան յարկը, ինքզինքը չի պաշտպաներ այն
հարուածներէն որոնց արժանի՞ է թէ ոչ, չեմ
գիտեր, բայց որոնց ապահովապէս կ'ենթար-
կուի: Միւսը՝ դիմաձածուկ կիներ, պարկեշտ
ամուսնի պատրուակը երեսին վրայ, բարեւ-
ներու ու մեծարանքներու եւ մաքուր կնոջ
տիտղոսի կողոպտումին մէջ կը զայրացնէ զիս:
Ու դառնալով իր մտատանջութեանը, բարե-
կամս աւելցուց:

— Ըսի որ հիմա էմմանն սիրտը կորսնցնելէ զատ ո եւ է վախ չսպառնար ինծի , մտայածին սարսափ որ հիւանդ երեւակայութեանն ծնողնդն է . այդպէս չէ սակայն . ես այն հազարումէկ չնչին նշաններուն անձկութեամբ կը հետեւիմ , որոնք մօտալուտ կը ցուցնեն ասիկայ . նախ էմման մտամոլար ու շուարած բան մը ունի . շատ հեղ խօսակցութեան մէջ մտքով բացակայ է ու հազիւ հազ մէկ խօսքը կրկնելուս կ'ուշաբերի , գէշ նշան . յետոյ իր սրբազարդին միշտ խնամօտ , հիմայ մանաւանդ ծայրայեղ մարմնապաշտութեամբ մը իր բնական շնորհներուն ուշադրութիւն կ'ընէ , աւելի գէշ նշան . ինծի հետ՝ իր սովորութեան հակառակ՝ քծնող ու ներողութիւն խնդրելու պէս ձեւեր մը ունի միշտ . ասոնք լիովին կ'ապացուցանեն ինծի ներկայութիւնը այն միւսին որ ինէ երջանկութիւնս կը յափշտակէ :

Կը խորհիմ մանաւանդ որ էմման ինծի համար իր էրիկը ձգելէն վերջը՝ կարող է զիս ալ , ուրիշի մը սիրուն , ձգելու : Թող ձգէ զիս . բայց պիտի գտնուի՞ մէկը որ ինծի պէս ու ինծի չափ գիտնայ սիրել զինքը . զիւրին ու դժուարին բան միայնաւ մայն . անիկայ ինծի համար միայն գեղեցիկ կ'ընը չէր որուն կը տեսնան , այլ մարմնացումը ամէն մարդկային երազներու , կը հասկնաս . Ո՞վ ինէ զատ այս ըմբռնումով պիտի ծնրագրէ իր առջեւ . ուսմիկ հեթանոսներն էին միայն որ ատենով կուտքերը կը պաշտէին իրբեւ նիւթ . միւսները՝ իրբեւ խորհրդանշանը գերագոյն զօրութեան մը երկրպագած են անոր միայն . Այսպէս ալ ես էմմանին դէմը :

Է

Ես սրտապնդեցի հէք տղան . իր խանգարած երեւակայութիւնը հանդարտեցուցի .

— Որովհետեւ էմման ատեն ատեն մըտմտքներ ունի եղբւ՝ չի հետեւիր ազկէ որ անպատճառ նոր հոմանի մը ունեցած ըլլայ . քեզի համար իր բրած զոհողութիւնն երբը ամէն տարակոյս վանելու չափ մեծ բաներ են . անխելքութիւն է ուրեմն միտքը չարչարել անգոյ ոտիտի մը կսկիծովը , բայց այդ վիճակը էապէս երջանկութեան յատուկ վիճակն է , այն է՝ չի կարենալ անխառն վա-

յելել զայն : Սի՛րէ էմմադ եւ ուրիշին վրայ մի՛ խորհիր , Սի՛ խորհիր միւսին վրայ :

Համոզուեցաւ քիչ մը , յետոյ .

— Խրատ մը կ'ուզեմ քեռէ , քանի որ յատկապէս ատոր համար եկայ , գործի օր մը այսպէս ժամերդ գրաւել , կ'ուզեմ այս կատկածի մթնոլորտէն դուրս ելլել եւ եթէ կարելի է հասկնալ իմ ենթադրութիւններուս անճիշդ ըլլալը :

— Խրատը , պատասխանեցի իրեն , հարցումիդ մէջն է . դժուար բան մը չէ էմմանին պէս կ'նոջ ուր երթալ գալը հասկնալ :

Ձի կեցաւ ալ քովս . ձեռքս թոթվեց ու գնաց :

Տանընդհանր օր հազիւ անցեր էր , իրիկունս մը դէմ եկաւ նորէն . բերանը կղզուած էր .

— Ի՞նչ կայ , ի՞նչ ունիս նորէն :

Ան ատեն խորունկ ու ցած ձայնով կամաց կամաց սկսաւ պատմել .

— Քանի մը օր շարունակ լրտեսեցի զինքը . էմման շարաթը երկու անգամ աւելուողն զաւակները տեսնելու կ'երթար էրկանը տունը ու ժամերով կը մնար հոն . բան մը չի կար ստգտանելի այս վարմունքին մէջ . աակէ դուրս պզտիկ գնումներուն համար Բերայի վաճառատունները կը մտնէր , ու ոչինչ ատնցմէ զատ . իր կեանքը յստակ կանոնաւորութեամբ կը ճշտուէր եւ խիստ մօտ էի հիւանդոտ երեւակայութեանս վրայ ծիծաղելու երբոր շարաթ մը առաջ տեսայ էմման իր տղոցը տունէն դուրս ելլելուն . տփուրն այստեղը կարմրած ու երեսին վրայ այն չեմ վիտեր ինչ արտայայտութիւնը կար որ յանցաւոր կ'ընը կը մատնէ :

Կատկած մը , փայլակի մը արագութեամբ , անցաւ մտքիս մէջէն . թերեւս հոս այս տանը մէջ , ուր էրիկը բացակայ էր ցորեկ ատեն , կը տեսակցէր իր սիրած մարդուն հետ . սպասաւորները որ վերջապէս իր առջի ծառաներն էին , կ'ընային դրամի համար աչք գոցել եղածին :

Այսօր , երկու ժամ կայ , էմման նորէն եկաւ հոն . ես որոշումս առեւր էի արդէն : Քիչ մը ատեն անցնելէ վերջը դուռը զարկի . սպասաւոր մը դիմաւորեց զիս . պատրուակ մը պէտք էր

այս տան մէջ մուտքս արդարացնելու համար .
տանտէրոջ անունը տուի :

— Վերն , է պատասխանեց սպասաւորը ,
խմաց տամ :

Ապշեցայ . էրիկը տո՛ւնն էր այս ժամուն .
յետոյ սանդուխներէն վեր նետուեցայ . սպա-
սաւորը հազիւ ետեւէս կրնար համարիլ , ի զուր
ջանալով խօսք հասկցնել ինծի , կեցնել զիս :
Ոչ ոք կար տան մէջ . միայն , էն վերի յարկը
ուր հասեր էի ահա , ննջասենեակի մը կիսա-
բաց դուռնէն անոյշ ձայն մը , էմմաին ձայնը
ականջիս դադաւ , ու զգոյշութեամբ մօտենա-
լով կրցայ որոշ կերպով տեսնել զինքը իր ա-
մուսնոյն թեւերուն մէջ մարմնակործան :

Գ. ԶՕՀՐԱՊ

ՏԻՈՒՐ ԽՈՂԵՐ

Պատշգամիս մէջ նստած լուռ , մըտառոյց,
Ուրկէ ծովը կը պարզուի իմ առաջ,
Ես կը խորհիմ կեանքիս վերայ վշտառոյց,
Ու կը քրո՛ւի ցաւած սրտէս մի հառաջ . . .

Ամպոց տակէն լուսնական նոր կը ծաթի,
Ու պատռելով աղոտոտ սահանքը մութին՝
Իր ցուքերը կը ցանցընէ ամեն դի,
Ծովուն վերայ , ինչպէս հոգւոյս մէջ մըթին .

Ու ժամերով ես կը դիտեմ յուզմունքով,
Տեսարանը խորհրդագրիկ , ներշնչուն,
Ո՛հ , դեռ . չըմպած սիրոյ հեշտանքն անոր քով,
Հոգիս պարտի օր մ'ընել իր վերին չուն . . .

* * *

Կը խրոպիմ ծովն անդ երբ երկինքէն,
Լուսնին արծաթ շողերն իրեն կ'ընեն քեն .
Իմ մէջս ալ կայ սիրոյ խրոպքը թաքուն
Ու գիշերներս կ'անցընեմ ես լուռ , անքուն :

Հոգիս մութին մէջը պիտի խաբխալի
Երբոր իրեն նայուածքն օր մը գիս խաբե . . .
Մահուան դալուկն ալ գիս պիտի միշտ պատէ
Երբ իր նայուածքն օր մը , ափսոս , գիս ատէ . . .

ՎԱՐԴԳԷՍ

ԿՏԱԿԻ ՄԸ ԱՌԹԻԻ

— Երգ —

Մասիսի ընթերցողները հաւանաբար պի-
տի յիշեն Մ . Նաթանեանի այն յօդուածը (*) ,
որով արդարացի արտունջ մը կրնէր Սրբանձ-
տեանց կտակին մինչեւ այսօր անգործադրելի
մնալուն դէմ :

Ընթերցողներուս յիշողութեանը օգնելու
համար մէջ կը բերեմ այդ յօդուածին մէկ
քանի կէտերը . Սրբանձտեանց Եպիսկոպոս
1000 ոսկի կը թողու որպէս զի այդ գումարով
իր ծննդավայրին՝ Վանի մէջ հիւանդանոց
մը կ'անդնուի : Այդ հազար ոսկին Ազգ.
Կեդր. Վարչութեան որոշումով պահ կը դրուի
Բերայի Կալուածոց Հոգաբարձութեան Սըն-
տուկը , 5 % տոկոսով :

Այս է խնդիրը իր պարզ վիճակին մէջ ,
որուն առջեւ Նաթանեան է՛ք . իրաւամբ կը
հարցնէր թէ ի՞նչ պատճառ կայ որ այդ գու-
մարը նպատակին չգործածուի , երբ մահա-
ւանդ Դեր . կտակարարին եղբայրներէն մէկը
մինչեւ անգամ գետինն ալ նուիրելու պատ-
րաստ է այդ նպատակին համար :

Իրաւ , ասի անհասկնալի կէտ մըն է . ին-
ծի համար , սակայն , այդ պարագան աւելի
զարմանալի երեւցաւ , երբ մօտեցաւ առիթ
ունեցայ կարգաւու Վանի ամերիկեան միախո-
նարութեան կողմէ պատրաստուած տարեկան
տեղեկագրին բժշկական մասը : Այդ տեղե-
կագրին մէջ ամերիկացի բժիշկ Տոքթ . Ըշըր
մանրամասնօրէն կը ներկայացնէր իրենց հի-
ւանդանոցին մէջ դարմանուած հիւանդներուն
թիւն ու տեսակը : Այս բազէիս աչքիս առ-
ջեւ չունիմ տեղեկագիրը , որ անկէ փոխ առ-
նեմ ճիշդ թիւերը . բայց սաչափը որոշ կը
յիշեմ թէ ամերիկացի բժիշկը կը շեշտէր Վա-
նի մէջ աւելի քանարձակ հիւանդանոց մը ու
նենալու պէտքը : Մատնանիշ կ'ըլլուէր նմա-
նապէս թէ ո՛չ թէ Վան քաղաքէն՝ այլ նաեւ
շրջականերէն բազմաթիւ հիւանդներ կը դի-
մէին իրենց հիւանդանոցը եւ իրենք անկա-
րող էին հասնիլ այս ամէնուն :

Մեզի համար հոս կարեւորութիւն ունե-

(*) Մասիս 1901 Յունիս 16ի Թիւին մէջ հրատարակ-
ուած :

ցող կէտը սա՛ է թէ ամերիկացի բժիշկը այս օրուան օրս իր տեղեկագրովը իր ընկերութեան կը զգացնէ թէ անհրաժեշտ է ընդարձակել Վանի մէջ գտնուած Պորտի հիւանդանոցը :

Սրուանձտեանց Եպիսկոպոս ասկէ ինը տարի առաջ զգացեր է այդ պէտքը , ու բարի գողափարը ունեցեր է այդ նպատակին համար ալ ձգել հազար ոսկի : Եւ սակայն մինչեւ այս օր դրամը կը մնայ աննպատակ :

Գիտեմ թէ պիտի գտնուին հաշուագէտ մարդիկ (ու մեր մէջ շատ կան ատոնցմէ) որոնք պիտի ըսեն թէ 5% տոկոսով կը չահագործուի կոր դրամը : Ինչո՞ւն պէտք սակայն այդ տեսակ չահագործում :

Իմ դատողութիւնովս՝ բացարձակ անիրաւութիւն մըն է ասի հանգուցեալ կտակարարին դէմ : Կտակին նպատակը որոշապէս գրծուած է կ'ըսուի , ուրեմն կտակակատարներուն կը մնար յարգել իրենց յանձնուած պարտականութիւնը :

Ձի կրնար բռնել թէ կտակուած դրամը հիւանդանոցի հաստատութեան համար գործածելուն պէտքը չի տեսնուիր : Ասի սխալ պիտի ըլլար կրկնապէս . քանզի նախ՝ կտակարարը ինք այդ պէտքը զգացեր է ասկէ գէթ ինը տարի առաջ . եւ երկրորդ՝ հիմա ալ , ինը տարի վերջը , նոյն պէտքը կը չեւտուի Վան գտնուող ամերիկացի բժիշկի մը կողմէ : Հետեւութիւնը շատ որոշ է ինծի համար : Կտակակատարները անփոյթ գտնուած են իրենց յանձնուած պաշտօնը կատարելու , հիւանդանոցը հիմնարկելու մասին :

Բազմաթիւ խեղճ ու աղքատ հիւանդներու արդար տրտունջներուն արժանի են ա. նոնք որ չեն գործածած դրամը՝ կտակուած նպատակին համար : Այդ հազար ոսկին ինը տարիներու տոկոսովը բաւական կրնայ ըլլալ անշուշտ միսթարական հիւանդանոց մը կանգ-

նելու ու վարելու համար գաւառային կեդրոնի մը մէջ . ինչպէս է Վանը : Այս մասին ալ վերը յիշած տեղեկագիրս կը ցուցնէ թէ հիւանդներէն ոմանք լաւ կը վճարեն , ամերիկեան հիւանդանոցին մէջ իրենց ստացած դարմանին ու խնամքին համար :

Բայց ես քիչ մը աւելի առաջ պիտի երթամ ու ոմանց աչքին յանդուգն գողափար մը արտայայտած ըլլալու չափ տարբեր թեւադրութիւն մը խոյ պիտի ընեմ , եթէ աւարկուի թէ Սրբազան կտակարարին թողուցած ստակով կարելի չէ բանալ ու շարունակել հիւանդանոց մը : Ինչո՞ւն այդ գումարը կամ անոր տոկոսը չի տրուի ամերիկեան հիւանդանոցին . չէ՞ մի որ հիւանդանոց մը հիմնելու հաւասար գործ մը կատարուած կ'ըլլայ այս կերպով ալ : Կարելի է , օրինակի համար , Սրուանձտեանց Սրահ անունին տակ բաժինի մը հաստատմամբ նոյն ամերիկեան հիւանդանոցին մէջ , իրագործել կտակը :

Խնդիրը դրամը իր նպատակին գործածելուն մէջն է . եւ եթէ ուրիշ կերպով կարելի պիտի չըլլայ Վանի կարօտ հիւանդներուն հասցունել այդ կտակը , աւասիկ ես կը ներկայացնեմ շատ դիւրին կերպ մը , որուն դէմ հանուելիք միակ աւարկութիւնը պիտի ըլլայ սա՛ «Մեր»ին ու «Օտար»ին անպէտ խորութիւնը : Երբ բարիք մը գործելու ելլենք , «Օտար»էն եկած դրամը չենք անարգեր . բայց երբ խնդիրը տալու գայ , գիտեմ թէ շատեր պիտի ըսեն որ չիտակ չէ մեք դրամը օտարին տալ : Խորհեցէք սակայն թէ այսպէսով դրամը իր նպատակին շատ աւելի հաւատարմութեամբ կը գործածուի , եւ թէ Ձինացիները չէ որ պիտի վայելեն անոր օգուտը , հապտ դարձեալ Հայերը , ինչ որ կը կարծեմ թէ էր Սրբազան կտակարարին իղձը :

ՏՈՔԹ. ՅՈՎՍ. Տ. ՄՏԵՓԱՆԵԱՆ

Նախորդ շաբթուն Մանչէսթրէն մայրաքաղաքս հասաւ Պ. Միքիաս Արապեան , որդի Տօքթ. Աղեքսանդր պէյ Արապեանի : Պ. Մ. Արապեան , որ Մանչէսթրի մէջ առեւտրական գործերով կը զբաղի եւ իր ծնողքը տեսնելու եկած է , Մանիսի եւ Արեւելի ընթերցողներուն ծանօթ է իր գրական գեղեցիկ յօդուածներով որոնք «Շ. Շաւարշ» ծածկանունը կը կրեն :

Պ. Արապեան , — կամ «Շ. Շաւարշ» — այս երկուշաբթի օր Ազգ. Հիւանդանոց այցելեց եւ կը յուսանք որ իր տպաւորութիւնները Մանիսի մէջ հրատարակելու բաղաւա-

Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Փիլիսոփային առակները (Հոգեբանական վեպ) Բօլ Պուռժէ, անդամ Գրականական Ակադեմիայի, Թարգմ. Օննիկ Զիֆթէ-Սարաֆ, Տպ. Նսան Պէրպէրեան, Գին Եդրօ :

(Բ. եւ վերջին մաս)

Ամէն լեզու իր հոգեբանութիւնը ունի, մէկուն յատկութիւնները միւսին յատկութիւններուն չեն կրնար համապատասխանել. քերականական միտքը կրնայ շատ անգամ քանի մը գաղափարներ մէկէն արտայայտել մինչ Հայուն ուղեղը չի կրնար այդ միտքիւնը քանդել: Եւ գիտնալ պէտք է թէ աշխարհիս մէջ միակ լեզուն Փրանսերէնը չէ, անգլիս կան շատ մը լեզուներ որոնցմէ որ մը կրնայ ըլլալ որ գիրք մը թարգմանուի հայերէնի: Եթէ այդ թարգմանիչը Օննիկ Զիֆթէ-Սարաֆի սկզբունքներովը չարժի, եթէ իրեն հետեւող ունենայ գերմաներէնէ, անգլիերէնէ, իտալերէնէ, ռուսերէնէ եւ ուրիշ շատ մը լեզուներէ թարգմանողներ, այն առեն հայերէնը կատարեալ քառսի մը պիտի վերածուէր:

Քանի որ լեզուն միջոցն է գաղափարներու փոխանակութեան, գրագէտը ստիպուած է եթէ կ'ուզէ իր գաղափարներով ժողովուրդին մատչելի ըլլալ՝ անոր ամէնէն յետին պայմանները յարգել եւ անոր մէջ նորութիւններ չմտնել՝ բացի ինչ ինչ հարկեցուցիչ պարագաներէ — տարբեր անշուշտ կրօնական ժողովին «հարկեցուցիչ»էն — ուր գրագէտը իր գաղափարները պէտք եղածին պէս չհրնալով արտայայտել, կը ստիպուի նոր բացատրութեան մը գիտնել՝ նոր բառի մը կազմութեամբ: Երբեք ալ ճշմարտեալ ձեւի մը վրայ հիմնուած: Մինչդեռ Օննիկ Զիֆթէ-Սարաֆ ինքնահակառակ կը կազմէ բարդութիւններ որոնք կը յայտնեն գաղափարներ զորս մէկ բառով չէ՝ բայց երկու բառով կարելի է արտայայտել:

Այսպէս կազմած է օրինակի համար ինքնացեղ (104), ուղղափարեղ (115), վերապրիչ (142), գեղազարդեղ (169), անստակախաղ (180), նեղախաղ (180) բռնապատասխ (192), հիւրանշանեղ (311) գրաւորութեալ (136), սիրարկած (141), մեկնաւ (209),

ներգորութիւն (245), ախտորոշեղ (254), բռնագրած (293), յստակաստութիւն (340), համեստացոյցութիւն (1) ընտելաթուղ (18), սեւեռանձամբ (319), զգայախարդ (303), խորախորհուրդ (23), զրգայութիւն (28), հանդիպագոյ (92), պնդասեւեռ (93), աշխատախուզ (93), վերուստուց (98), պատահաշահ (98), ճշտայայտեղ (201), շուրջերես (137), շուրջպարդ (330), միջանցեղ, հանգստաթուղ (98), միջօրեակ (99) բառերը եւ ասոնց շատ մը նմաններ որոնք ամէն էջի մէջ կը տեսնուին եւ զորս պարզապէս երկու բառով պէտք էր արտայայտել, գէթ աւելի ըմբռնելի ըլլալու եւ կարգ մը անխուսափելի սխալներէ ազատ մնալու համար:

Ինչպէս ֆիննացեղ՝ որ սխալ բարդութիւն մըն է եւ առ առաւելն եթէ հարկ էր բարդ բառ մը ըլլալ՝ պէտք է ըլլար ֆիննացեղեղ, նաեւ ընտելաթուղ՝ սխալ մըն է մեր լեզուին հոգւոյն դէմ բոլոր իր նմաններովը (գրեւակերպ, վարուեղակերպ, տարեղակերպ եւ ուրիշ շատ մը նմանները) վրան զի հայերէն գործածական բառ ըլլալով բացի վառեղափայտէն ուրիշ բարդ բառ մը չեմ յիշեր ուր աներկուցթ մը բարդութեան մը առաջին բառը ըլլայ: Եւ բացատրութեան վրայ հարկ չկայ կարծեմ ըսելու թէ օրէնք մը չհրնար հիմնուիլ, այլ յաճախեալ ձեւերու վրայ միայն: Ընտելաթուղ՝ թերեւս կարելի ըլլայ բռն ընտելաթուղ՝ եթէ սակայն կուտայ այն իմաստը զոր Օննիկ Զիֆթէ-Սարաֆ կուզէ արտայայտել:

Նոյնպէս սխալ են շուրջերես եւ շուրջապարդ ձեւերը որոնք պէտք է ըլլան շրջերես, շրջ(ա)պարդ՝ ընդունուած շրջապատեղ, եւ այլ ձեւերու վրայ:

Բառերու այս դասակարգին մէջ կրնանք դասել նաեւ վերելեղ (247), վերապրիչ (142), ներակեցաղ (25) եւ ներկեցաղ (141), վեր-

հանել (18), առդել (94) բառերը որոնք ան-
նշանակ եւ անիմաստ են հայ լեզուի տեսա-
կէտով եւ բոլորովին՝ գործածութեան տեսա-
կէտով :

«Իր տունին սանդուխէն կը վերելնէի»
գրուած է (էջ 247) տեղ մը գրքին մէջ : Վեր-
ելնել բացատրութիւն մըն է զոր կը գործա-
ծենք սովորաբար՝ երկու բառով բացատրե-
լով մեր միտքը . ահա այդ երկու բառերն են
որ դիպումով իրարու քով եկած են եւ
կազմած վերելնել բայը զոր ֆրանսերէն բա-
ռին կազմութիւնը ունի , բայց հայերէնի մէջ
չիօթ իմաստ մը որմէ դժբաղդաբար նոյնինքն
Օննիկ Չիֆթէ-Սարաֆ չէ կրցած խուսափիլ :
Սանդուխէն վեր ելնելու համար գործածուած
այդ բառը դառնալ՝ այսինքն վերստին ելնել
իմաստով ալ կը գործածէ դարձեալ գաղերէն
բառին կազմութեան ձեւին անստիճաբար
փոյթ ընելու թէ ասով գրածը հայերէնէ ա-
ւելի ֆրանսերէն է եւ թարգմանութիւնը ծի-
ծաղելի հանգամանք մը կ'առնէ :

Բացէք իր գրքին 143րդ էջը եւ հոն պի-
տի հանդիպիք «բայց վերելնելն ալ ժա-
մանումին . . . » նախադասութեան , ուր պար-
զապէս սա երանելի վերելնել բառը «դառ-
նալն ալ ժամանումին» իմաստը ունի : Կը
հարցնեմ թէ ա՛յս պիտի ըլլայ նոր ուղի մը
բանալու համար տարուած խնամքը եւ ջան-
քը : Եթէ հարկ էր անպատճառ սանդուխէն
վեր ելնելու գաղափարը մէկ բառով արտա-
յայտել կարելի էր գաւառական աստիճան
մը դիմել եւ անով բացատրել այդ գաղա-
փարը : Որչափ կը յիշեմ , կարծեմ Տրապի-
զոնցիք թռնիլ բայ մը ունին յատուկ սան-
դուխէն վեր բարձրանալու համար գործա-
ծելի :

Վերապրիլ նոյնպէս անիմաստ է՝ մանա-
ւանդ գործածուած տեղին մէջ : Տեսէք 142րդ
էջը ուր կը գրէ . «հոգեզինտութեան վարդապե-
տութիւններէն ետքը վեր ապրեցաւ ներսս» :
Որչափ ատեն որ ետքը բառը իր գոյութիւնը կը
պահէ , այդ նախադասութեան մէջ Հայերու
միտքը չի կրնար ընդունիլ որ վերապրեցաւ
ձեւը քովը գրուի , վասն զի վերապրեցաւ
արդէն ճիշտ այն կը նշանակէ ինչ որ կը նշա-
նակէ «քանի մը ետքը ապրիլ»ը հայերէնի մէջ :

Ֆրանսացին կրնայ այդ բացատրութիւնը գոր-
ծածել , մենք պարտական չենք ստրկական
օրինակութեամբ մը անոր հետեւիլ եւ մեզի
յատուկ ձեւերուն դէմ մեղանջել բոլորովին
անիրաւ եւ անիմաստ կերպով :

Գալով ներակենցաղ եւ ներկենցաղ նոյնի-
մաստ եւ տարբեր ձեւերով բառերուն՝ ծնունդ
կամ անուշադրութեան կամ ըրածին անգի-
տակցութեան եւ կամ վերջապէս քաջաճոյ-
քի , պարզապէս անհեթեթ ձեւեր են , վասն
զի «ներքինը» կամ «կենցաղ» բառերը արդէն
ինքնին մարդուն ներքին կեանքին իմաստը
կու տան հայերէնի մէջ՝ առանց իրարու միա-
նայու , բայց ասով հանդերձ որ եւ է դիտու-
ղութեան տեղի չափոր մնար եթէ գէթ ներ-
քին կենցաղ բացատրութիւնը գործածէր իմ-
խանակ ներակենցաղ եւ ներկենցաղ բառե-
րուն որոնց կազմութեան համար ինքն իրեն
հետ համաձայն չէ : Եւ մենք պիտի ներէինք
այս հակասութիւնը որ թարգմանութեան մէջ
գործադրուած է՝ եթէ սոյն բանը չտեսնէինք
նոյն իսկ իր ինքնագիր մէկ գրութեանը —
նոյն իսկ այս գրքին առաջաբանին — մէջ ուր
տեղ մը «քերութիւն» ձեւը կը գործածէ եւ
քիչ մը վարը «քերութիւն» : Ո՛րն է ճիշտը :
Վերհանել նոյնպէս գրեթէ նշանակութիւնէ
զուրկ է մանաւանդ տեղ մը (էջ 18) որուն
իմաստը չկրցանք հասկնալ , կատարեալ ֆրանս-
սաբանութիւն մը կայ հոն թերեւս :

Իսկ վերջապէս առդել բառը կա՛մ հարկ է
որ առդել ձեւով գործածուէր եւ կամ ասեղեկ
անցընել ձեւով , որովհետեւ առդել ձեւը մինչեւ
հիմա չունինք եւ բռնի ալ չի կրնար ստեղ-
ծուիլ :

Նոյնպէս Օննիկ Չիֆթէ-Սարաֆի թարգ-
մանութեան մէջ ջանք մը կայ ֆրանսերէն
բառերու ամէն նրբութիւնները հայերէն բա-
ռերուն ալ տալու , այնպէս որ բռն հայերէն
յոյզք , գրգռութիւն , բարքոքոքում բառերէն մէկը
բաւական համարուած ժամանակ բռն գա-
ղիներէն բառին բոլոր նրբութիւնը երեւան հա-
նելու համար կը գործածէ գրգռալուքութիւն
(էջ 28) բառը որ աւելորդ խճողում մըն է հայ
լեզուին համար : Նոյնպէս օրինակի համար
«սենեկի մը մէջ բերուած կանթեղ մը խաւա-
րը անմիջապէս ըստի կը փոխակերպէ» (էջ 258)

նախադասութեան փոխակերպել թայր ամէն ընթերցող ինքնին պիտի բմբռնէ թէ պարզապէս աւելորդ երանգ մըն է եւ մեր լեզուին անընտել բացատրութիւն մը, քանի որ «կը փոխե» բացատրութիւնը աւելի պարզ եւ մանաւանդ աւելի հայայն պիտի ընէր :

Այսպէս նաեւ անտեղի չէ ծայրաշնչում եւ նախանշիւ բառերը գործածել (էջ 21 եւ 219) երբ պարզ, գործածական եւ սովորական եզրակացութիւն եւ նախազգուշութիւն բառերը ունինք : Արդեօք նոր ուղի մը բացած ըլլալու համար անպատճառ նոր բառեր գործածելու եւ տարօրինակութիւններով ու չաղութիւն գրաւելու է : Խնդիրը գաղափարներու նոր ուղի մը բանալուն վրայ է եւ ոչ թէ բառերով տարօրինակ եւ անսովոր ձեւեր ստեղծելուն : Կարելի եղածին չափ ժողովուրդին խօսած լեզուն գրականութեան մէջ մտնողն է որ արժանիք մը կրնայ ըլլալ գրողի մը համար եւ ոչ թէ գրասուր լեզուն հեռանքները ժողովուրդին լեզունէն, անոր խօսած լեզուն դէմ նորօրինակ մեղանշումներով, զոր օրինակ ի՞նչ կը նշանակէ «նեքանիտի աւսնը-տութիւն» երբ ամէն մարդ կը գործածէ «քաւուն աւսնութիւն» բացատրութիւնը, չէ՞ մի որ երկուքն ալ նոյն նշանակութիւնը ունին՝ միայն երկրորդին առաւելութիւնն ըլլալով աւելի մեր՝ հետեւաբար սրտի մօտիկ եւ միւսին՝ օտար հետեւաբար խորթ բացատրութիւն մը ըլլալը :

Ի՞նչ բացատրութիւն է կտրուկաբար, երբ բառ մը ունինք կարկտանք որ ինքնին ունի իր մէջը կտորի իմաստը : Այս գաղափարին մէջ կրնան մտնուիլ նաեւ վաշտաշրջիկ (167) եւ հացաշահ (224) բառերը, վասն զի շրջող, շրջուն բառերը երբեք չենք կարծեր թէ օգին մէջ շրջողի իմաստը ունենան, այլ անշուշտ վայր մը, ինչպէս նաեւ «հացիս արգեյք ըլլալ» ժողովրդական եւ կամ «ապրուսիս արգեյք ըլլալ» սովորական բացատրութիւնները իմաստի տարբերութիւն մը ունեցած ըլլան սա նոր ստեղծուած «հացաշահիս արգեյք ըլլալ» ձեւէն : Մանաւանդ «հացիս արգեյք» բացատրութիւնը աւելի սիրով պիտի գործածէինք իբր ժողովրդական բացատրութիւն եւ ասոր համար որ եւ է անպատեհութիւն չպիտի ըլլար քանի որ «խեղը անիծել» սովորական բացատրութիւնը արդէն գործածուած էր գրեթէ մէջ (էջ 225) :

Հայ լեզուն վտարելի եւ բոլորովին անընդունելի են մեծամասնութիւնը այն բառերուն որոնք Ֆրանսական re, sur, trans, եւ այլ նախադիր մասնիկներով եւ բայով մը կազմուած բառերու նմանութեամբ հայերէնի մէջ

կը մտնեն : Այս ընդունելութիւնը, որ Օննիկ Զիֆթէ-Սարաֆէն չափ առաջ արդէն ծայր տալ սկսած է՝ բոլորովին անյարմար է մեր բովանդակներուն : Այս ձգտումը յունարանութեան ատենէն մեր մէջ ծնունդ առած է եւ անկէ մնացած բազմաթիւ հետքեր ունինք :

Այսպէս ընթեռնույ, կարդալ, հարազատ բառերուն տեղ կատարեալ յունարանութեամբ մը վերծանել բառը ընդունած են, եւ այսպէս ուրիշ շատ մը բառեր զորս Մամբրէի եւ Գաւիթ Անյաղթ փիլիսոփային օրերէն սկսեալ մինչեւ անցեալ դարուն վերջերը յունարէն եւ լատիներէն գիտցող հեղինակներ լեզուին մէջ մտցնել ուզած են : Այս բառերէն սմանք գիտական բացատրութիւններու համար անհրաժեշտ համարուելով եւ ոմանք ալ ընդունուած օրէն մինչեւ հիմա տարբեր իմաստ առած ըլլալով իրենց գոյութիւնը պահած են, իսկ միւսները բոլորովին վտարուած են լեզունէն :

Այսպէս նախնականէն տարբեր իմաստով լեզուին մէջ իրենց գոյութիւնը ապահոված բառեր են՝ վերաբերել, վերագրել, վերածել, վերլուծել եւ այլն որոնք քերել, գրել, ամել եւ շուծել բայերուն վրայ եւ վերսին իմաստով մասնիկներուն միանալէն կազմուած բառեր են : Եւ այսպէս միացումներուն մէջ իրենց նախնական բայերուն իմաստէն որոշ եւ բանգով մը կը բաժնուին եւ ասոր համար անոնց գործածութիւնը չէ թէ միայն ներքին՝ այլ անհրաժեշտ դարձած է : Գալով կարգ մը բառերու զորս այսօր շատեր սովորութեամբ միայն կը գործածեն՝ ֆրանսական բառերուն կազմութեամբ՝ առանց սակայն որոշ առաւելութիւն մը ձեռք բերելու, անոնցմէ ալ օրինակ մը կարծեմ բառական պիտի ըլլայ : «Իզմիտէն վերադարձաւ» կ'ըսեն լրագրական լեզուով, մինչդեռ պարզ է թէ «դարձաւ» միայն բառական պիտի ըլլար հոս, վասն զի իմաստի տարբերութիւն չկայ :

Իստուալ արդէն կը նշանակէ «գալ կամ երթալ հոն ուրիշ մեկնած եր» իսկ վերադառնալ կը նշանակէ՝ եթէ կազմութեան նայելով տարբեր իմաստ մը տալ հարկ ըլլայ, «դառնալ» եւ յետոյ վերսին դառնալ, բայց զբռնադրաբար յետոյ վերստին մէկ մը եւս դառնալու համար դարձեալ երթալ մը պէտք պիտի ըլլար (որուն վերերթալ չենք ըսեր սովորութեամբ) եւ այն ատեն դարձեալ դառնալ բայը միայն բառական է : Եւ ասիկա միակ բառը չէ, ասոր պէս բազմաթիւ բառեր ունինք որոնք այսքան անիմաստ ձեւեր առած են եւ զորս սովորութեամբ կը գործածենք՝ առանց փնտռելու թէ սխալ է թէ ուղիղ :

ինչ որ հինքը յունարէնի եւ լատիններէնի նմանութեամբ րրած էին, նորքը Փրանսերէնի նմանութեամբ ըրին եւ այդ նորութեան մէջ անմասն չմնալու համար Փիլիսոփային աշակերտին թարգմանիչը ինքն ալ փորձած է անոնցմէ քանի մը հատ գտնել մացնել լեզուին մէջ: Այսպէս վերջուշեր (93), վերագնեղ (115) վերկոշեր (116), վերհանեղ (18) բառերը կը գործածէ այնպիսի տեղեր ուր բառական պիտի ըլլար միայն յիշեղ, գտնեղ, կոշեղ, հանեղ (կամ աւելի լաւ՝ երեւան հանեղ) բառերը գործածել:

Նոյնպէս գործի մը խրթնացումին կը ծառայէ սովորական բառերուն տեղ անսովոր բառեր գործածելու Զանքը, որ մասնաւոր հրապարկ մը չեմ կարծեր որ ունենայ հեղինակի մը համար:

Այսպէս օրինակի համար ինչ պատճառ կայ գործածելու համարուն (էջ 115 եւ 181) բառը երբ ունինք թնաւ եւ անեւեւին բառերը, ինչո՞ւ չգործածել նման = պես, աննման, եւ մտնոյ՞ սովորական եւ յաճախեալ բառերը՝ երբ աշխարհաբար կը գրուի, եւ երթալ ընտրել հանգումակի(24) անհանգումակի(108) եւ անդհանքի (312) պէս բառերը:

Ինչ կը նշանակեն խոստանիշ եւ նրբախիդճ (302) կամ առիւնքնեղ (118), չարանանկ (315) բառերը. միթէ ասոնք արտայայտող բառեր կը պահուէին հայերէնի մէջ որ ասանկ ծիծաղելի ձեւերու կը դիմէ պարսպ տեղը: Ձէինք կարծեր թէ խորանանկ բառին գոյութիւնը արգարացնէր չարանանկի մը ալ կազմութիւնը, երբ լեզուին մէջ ունինք չար բառը՝ որքան պարզ այնքան հատու եւ չարանքս բառը նոյնքան յատկանշական՝ որքան գործածական:

Դրոշկեղ (էջ 5), մակակ (17), ուիսդիս (17) ցցեցի (թերեւ ցցուցուցի կամ ցնցեցի (124), ճիշնաւսաժուի (142), զարգացեալ (154), դարձապաշտուն (112) բառերէն մենք միայն ենթադրական իմաստներ կրցանք հանել: Երանի անոնց որոնք որոշ կերպով հասկցան անոնց իմաստը:

* * *

... Բայց վերջացնել պէտք է վերջապէս: Դեւ ասոնք ամէնը իբր խճողում աւելորդ եւ անհասկնալի հարեւանցի քննութեան մը արդիւնքն են եւ աւելի խիստ քրննութիւն մը անշուշտ աւելի նոր տարօրինակութիւններ երեւան պիտի հանէ. բայց թերեւս աւելորդ աշխատութիւն մը պիտի ըլլայ քանի որ Օննիկ Զիֆթէ-Սարաֆ մտած է ճամբու մը մէջ ուրիշ դիւրու ետ դառնալ

չպիտի ուզէ՝ տեսակ մը արժանապատուութեան խնդիր համարելով զայն իրեն համար: Բայց ամէն պարագայի մէջ պէտք է համոզում գոյացնէ որ եթէ իրմով ընդունելութիւն ալ գտնէ, իր ուղղութիւնը օգտակար եւ գեղեցիկ ծառայութիւն մը մատուցած չպիտի ըլլայ հայ գրականութեան՝ այլ անոր մէջ մտացում փնտսակար գրութիւն մը եւ ազեղ ձգտում մը, որ պիտի գայ օրէ օր խաթարել եւ գեղծանել հարազատութեան դրոշմը հայ գրականութեան: Դր արդէն մեծ մասամբ օտարաշունչ լեզուի հարազատութիւնն ալ կուտատու, միայն տառերով հայ պիտի մնայ: Հիմա եթէ գաղափարները օտար գրականութեանց ազդեցութեան ներքեւ են՝ գէթ լեզուն, բառերը եւ գիրերը մերն են:

Գաղափարներուն պէս լեզուն եւ բառերն ալ եթէ օտարացնենք, ալ ինչ կը մնայ մեզի՝ եւ մեզքը չէ՞ որ մերը եղած բան մը — որիէ գանգատելու ալ պատճառ մը չունինք — ձգենք, առնելու համար օտարինը՝ որ եթէ ուրիշ թերութիւն չունի, գէթ զմեզ յատկանշելու էական յատկութիւնը չունի:

Բան մը միայն կը փոխադրենք: Սպասուած մը այս վէպին՝ եւ անոր երկրորդ տպագրութիւնը տեսնելու բաղքը, գերծ բոլորովին այն թերութիւններէն զորս մատնանիշ րրած ըլլալ կը կարծենք: Ատիկա երկու ուրախութեան պատճառ պիտի ըլլար:

Նախ որ ժողովուրդը ցոյց տուած պիտի ըլլար թէ այլեւս հոգեբանական վէպ մը ընկնելու չափ հասունութիւն ստացած է, թէ երկրորդ՝ Օննիկ Զիֆթէ-Սարաֆի թելադիր պիտի ըլլար յառաջ տանելու ինչ որ սկսած էր իբր «աժան գրականութիւն» արտադրելով յաջորդները այս գրքին, անշուշտ միշտ պայմանաւ որ աւելի խնամեալ — այսինքն դիւրըմբռնելի եւ աւելի ընտանոյսիկ — ըլլան լեզուով, թո՛ղ ուրիշներ ծրագիրներ պարզեն, հայ հարուստներու առաջարկներ ներկայացնեն Հրատարակչական մը կազմելու համար: Ահա անհատական ձեռնարկ մը որ տուաւ զիջել Հրատարակչական մը կարծիք, Գէթ չվհատեցնելու համար քաջալերել գիտնանք:

ԱՐԵՍԿ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ

Վերիպակ. — Մասիսի նախորդ քիւի Քաղաքական-Պատմական տեսութեան մէջ (էջ 473, Ա. սիւնակ, 28րդ տող), «Բ. Դարու կիսուն» տպագրուած է վերիպակով, փոխանակ «Ե. Դարու կիսուն» ըսուելու:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. Ս. ՍԹԻՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսները եօզուելու, Թիւ 27

Ա Ր Ի Ս Ե Ի Ը

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՅ ԵՒ ՕՋԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Վաճառանիշ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենաշուրջ հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ :

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու տարանայ դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիններու գերազանց աժանութիւնը : Փափաքողներուն՝ քաթալօկը ձրի կը շրկուի :

Մեծաքանակ գնումքնքն ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵՒԿ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻՔՎԱՃԱՌԱՊԵՐՈՆՆԵՐԸ, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՋ.—ՊՊ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ

Շաքսոնի

ՊՈՄՊՈՍ.—ՊՊ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔԱՆԳԻՐԻԱ.—Պ. Մ. Գալֆանեան .

ԳԱՀԻՐԷ.—Պ. Հ. Ռոզանբալ .

ՌՈՒՍՃՈՒԳ.—Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք .

ՎԱՌՆԱ.—Պ. Կեռոն Արտիքի .

ՋՄԻՆԻՆԻԱ.—Պ. Հայնրիխ Վառնիկ .

ՍԵԼԱՆԻԿ.—Պ. Տիեռ Ֆերնանտէզ .

ԻԻՍԿԻՒՊ.—Պ. Մ. Քալուանո .

ՊԵՏՐՈՒԹ.—Պ. Ֆրանքել Դիֆֆներ .

ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան Նոյարք .

ՏՐԱՊԻՋՈՆ.—Պ. Արիս Կ. Ինճիճեան .

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884ԻՆ

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ

ԱՐԴՈՒՋԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ս. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալաքա, Վոյվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիններով չափու վրայ կը պատրաստուին ամէն տեսակ չապիկ, օճիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ :

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպաններու զանազանութեամբ օժտուած ուրիշ գործարանը արամապիր է ընդունելու ու կատարեալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ :

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիններով օճիք, թեւնոց, ֆլանէլ, գուլպայ, թաշկինակ, ոսկեզօծ կոճակներ, փողկապ, դրամապնակ, զմելի «Չէֆիլտ», խողանակ, սանտր ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ :

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, ապրանայ ազնուութեան, յանձնարարութեանց խնամով պատրաստութեան, ու գիններու աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուններէն մէկն է :

ԳԻՆՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ու ոտքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՍՈՍԻԱԼԱԿԱՆ
ԴՊԻՆԹԵՐՈՒՄ
ԶԱՐԳԱՎԱՆ

ԲերԱ. Մեծ Կողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ. } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
 } 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց.

ՊՈԼԻՍ. } 1. Սուլթան Համամ.
 } 2. Սուլթան Պէյազիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ Երաւաւորութիւն

Մասնանիւղեր գաւառաց բոլոր ֆաղաֆներուն մէջ



ՌՕՍԻԱ — ROSSIA



Ա.ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ	34,775,642 Փրանք
Երաշխաւորութեան գումար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ ֆառափին վրայ, Մաֆասան հին սեղր
Ընդհ. Բնէի
Ա. ՀԻՒՐՄԻՒՅ

Ընդհ. Դործակալ
ԹԷՆՏՈՐ ՌԷԲԲԷՆ